

## Հ Ե Ն Ր Ի Կ Ի Բ Ս Է Ա \*

XV

իրաէն Վիեննայում.—Վերադարձը դէպի նօրվէզիալ.—„Ճարտարապես Սոլնչսի“ (Սոլնչսի փառասիրութեան և ևսովանութեան վոհերը.—Բանեար և Ֆուլի.—Հիլդէ Ա.անգէլ.—„Նարնջալին“ թագաւորութիւնը.—Ճարտարապետի զջըումը.—Ալինէ.—„Օդալին ամրացները“.—Հիլդէի յաղթանակը.—Սոլնչսը իբրև արուեստադէտ.՝ Հիլդէի բնաւորութիւնը.—Սոլնչս—Իրսէն).—„Փոքրիկ Էյօլֆ“ (Ալմէրսի ընտանիքը.—Ալֆրէդի ճանապարհորդութիւնը և նրա հսկուանքները.—Ռիդայի մարութիւնը.—„Մկնորսը“ և Ելօլֆի վախճանը.—Աստայի հրաժեշուը.—Ռիդայի բնաւորութեան լեղա-Միջումը.—Ամուսնութեան հիմքերը).

1891-ի յունուարին Իրսէն Միւնիսից մի քանի օրով գնացել էր Վիեննա, ուր նշանաւոր «Burgtheater»-ում իր «Ժողովրդի թշնամին» և «Գահաժառանգները» պէտք է ներկայաց-ուէին:

«Երիտասարդ Վիեննան», որ պատկառելի ծերունու մէջ տեսնում էր իր հանձարեղ ուսուցիչներից մէկին՝ հիացմունքով և սղերուուծ ցցցերով ընդունեց նրան: Մեծ զրամատուրդի պատուին կազմուած մի հանդիսաւոր երեկոյթում, ուր ներկայ էին աւստրիական մայրաքաղաքի դիտութեան, գեղարուեստի և քաղաքական կեանքի յայտնի ներկայացուցիչները, զանազան ձառնը լսելուց յետոյ՝ Իրսէն արտասնեց հետեւալը—«Այս երեկոյ ինձ համար մի բազդաւորութիւն է, որի յիշատակը հետո կը ատանեմ» դէպի Միւնիսէն: Երբ ես կեանքումս այնպիսի բան եմ տեսնում, որ ինձ ուրախացնում, հոգեպէս ալեկո-ծում է—այն ժամանակ դա կը դառնայ մի բանասելցուրիւն: Այս երեկոն ինձ յուղեց, և ես տեսնում եմ արդէն աչքերիս առաջ մի պատկեր, առանում եմ մի գեղեցիկ, պայծառ և ու-րախ երեղյիլ—չորհակալալ եմ ձեզանից, չորհակալ եմ. ես հա-ւատացած եմ, որ սա կը դառնայ մի բանաստեղծութիւն:

\*.) Տե՛ս «Մուլճ» № 7.

Մարդ ակամայ այս հրապարակական խոստովանութիւնն  
է յիշում՝ երբ կարգում է իրսէնի «Ճարտարապետ Սօլնես»  
«Bygmester Solness), որ լոյս տեսաւ 1892-ին:

Վերոյիշեալ խօսքերից մի քանի ամիս վերջ՝ յուլիսին՝  
իրսէն քսաննեօթամեայ բայսակայութիւնից յևոյց՝ մշտապէս  
վերադառնում է իր հայրենիք, որից մի ժամանակ հալածուած,  
իսկ այժմ ընդունում է իրրե անդուզական մի պարծանք,—  
Սյանիս որ «Ճարտարապետ Սօլնէսը» նա Նօրվէգիայումն է  
զրում:

Մութ և սիմբօլիքական —միտիքական շղարշը, որով առ-  
հասարակ ծածկուած են իրսէնի վերջին դրամաները՝ աչքի է  
ընկնում և ներկայ ատեղծագործութեան մէջ: Սակայն անորոշ  
գէմքերի, արբանամ ուրուազերի շուրջ փայլում է նորից ըէա-  
լիստական ֆօնը:

Հալվարդ Սօլնէս մի ճարտարապետ է, որ իր յաջողու-  
թեան ճանապարհը ոչ այնքան «աշակերտելով» ինչքան բնա-  
կան, ինքնաբուղիս աշղանդով է հարթել:

Նա մի բարեպաշտ ընտանիքի ղաւակ էր: Եւ հէնց այս  
պատճառով էլ իր աազանդն սկզբում կրօնական նպատակների  
է ծառայեցնում—եկեղեցիներ է կառուցանում: Սակայն ժամա-  
նակի ընթացքում նա չէ բաւականանում միայն նկեղեցիներով՝  
բացի հանգերձեալ աշխարհից՝ աշխարհացին կարգների մասին  
էլ է մոտածում և սկսում է «մարդկանց համար բնակարաններ»  
շինել Այսպէս իրրե բազմակողմանի ճարտարապետ՝ նա մեծ  
հոչչակ է վայելում: Սակայն ինչպէս—նպատակին հասնելու հա-  
մար՝ առանց միջոցների մէջ որ և է խարութիւն գնելու: Բարձ-  
րանալու, անուն վաստակելու նրա տեսնչը երեսում է հէնց  
ամուսնութիւնից կարծ ժամանակ յետոյ: Սօլնէսի կինը՝ Ալբնէն  
իր ծնողներից ժամանգել էր զեղեցիկ պարտէզով շրջապատուած  
մի տուն, որ իր ճարտարապետ ամուսնու ճաշակին տմենին  
չէր յարմարում: Այդ տունը նա համարում էր մի «տղեղ, փայ-  
տէ արկդ», որ վերաշնուռութեան համար նա անկարսղ էր կոր-  
ծանել, որովհետեւ իր կինը թանկացին յիշովութիւններով կապ-  
ուած էր այդ հին բնակրանի հետ Բայց Սօլնէսին յայտնի էր  
մի գաղանիք—սենեակներից մէկի ծինելոյզը ճեղքուած էր: Նա  
կամովին չէ ծածկում այդ ճեղքուածքը, որպէս զի մի օր տուն  
այրուի—«կան ընտրուած, արտաքոյ կարգի մարդիկ, որոնց  
ոյժ է ընդունակութիւն է չնորհուած մի բան ցանկանալ, տեն-  
չալ և կամենալ—այնքան յամտա և անզրգուելի կերպով, որ  
վերջ ի վերջոյ պէս և տեղի ունենայ»—ճարտարապետի այս  
խօսքերը, որ նա արտասանում է երկրորդ զործողութիւնն մէջ,

սեփական փորձառութիւնից են բղխում Նրա ջերմ ցանկութիւնն իրականանում է—«փայտէ արկղն» այրում և մի մոխրակոյտ է Ներկայացնում: Բայց կրակն ընկնում է ոչ թէ ծըսնելոյզից, այլ մի ուրիշ սենեակի զգեսաանոցից: Հրդեհը անուղղակի կերպով պատճառ է դառնում մի ծանր գժբաղդութեան—ճարտարապետի կինը երկիւղից սարսափահար է լինում և մի վտանգաւոր ջերմ է սահնում, որով վարակւում են և իր երկուրեակները, որոնք գեռ մի քանի ամսական էին: Մայրն ազատում է, իսկ նորածին զաւակները զոհւում են: Դժբաղդ մօր համար սա ի հարկէ մի սոսկալի հարուած էր: Այսպէս որ այդ ըստ էութեան բարի կինը այնուհետեւ համարեա ոչ մի ուրախ օր չէ տեսնում և ցրուածի նման քաշէ տալիս իր կեանքը:

Նո խորապէս զգում էր, որ իր ամուսինը ուրիշների համար կարող է բնակիարաններ կառուցանել, իսկ «իր համար—երբեք»: Նրա միակ միսիթարութիւնն այն էր, որ նա իրանց ժամանակաւոր բնակարանում մի քանի սենեակներ անուանում էր յատկապէս «երեխանների սենեակներ»:

Սյս անակնկալ գժբաղդութեան առաջ ճարտարապետն ի հարկէ նոյնպէս շանթահար է լինում—հէնց իր կոսջ վկայութեամբ՝ նա «որքան իմստ է, նոյնքան փափկասիրտա»: Սակայն նա ընդունակ է և ինքնատիրապետութեան: Նրա սիրտը, գոնէ առժամանակ, օժտուած է մոռացկոտութեան զգացմունքով, որ կատարելապէս անմատչելի էր Ալինէլ մայրական փիրուն հոգուն: Նա իր անմեղ զաւակների գիտակների վրայից հարթում է իր ճարտարապետական փառքի ուղին և դափնիներ վաստակելու համար—դարձեալ ոչ մի խարութիւն:

Ճարտարապետ Սօնէսը որքան փառասէր էր, նոյնքան էլ հսական: Նրա ջերմ փափազն էր առաջնութեան պսակը շարունակ թարմ պահել իր ճակատին, մնալ ընդ միշտ եղակի մի մեծութիւն: Եւ եթէ նրա փառասիրական պաշտամունքի համար չը ինայտւեցին նոյն իսկ իւր հարազատ զաւակները, հասկանալի է թէ անզուգականութեան փայլը պահպանելու համար՝ նա ինչպէս անողոք պէտք է լինէր դէպի օտարները: Մրցութեան ամենաանշան խրտումն անգամ նա իր սազմնային փիծակի մէջ ընկնում, խեղդամահ է անում: Բաւական չէ օրինակ, որ նա իր նախկին ուսուցիչ՝ ծերունի Քնուտ Բրօվիկին իր օգնականն է գարձել—աշխատում է սրա որդուն՝ Բանեարին, որ իր մօտ գծազրողի պաշտօն է փարում և փայլուն զարմանդ է ցոյց տալիս, ամեն իերպ ձնշել է: ինքնուրոյն յառաջազիմութեան ոչ մի ասպարէզ չը տալ Որպէս զի Բանեարի նման մի կարեւոր ոյժ շարունակ իր ստորագրեալը մնայ ահա թէ նա

ինչ տգեղ և խորամանկ միջոցի է դիմում Շանեարը զաղուց նշանուած է լինում իր հօրեղոր աղջկէ Կայեայ Ֆօսիի հետ Եւ ճարտարապետը որպէս զի առաջինին իր մօտ պահէ՝ նրա նշանածին էլ վերցնում է իրեւ հաշուապահ։ Սօլնէսն իրան այնպէս է պահում, որ միամիտ Կայեան ուղղակի սիրահարում է նրա վրայ Ճարտարապետն ի հարկէ սիրոյ ոչ մի նշոյլ չէր տածում դէպի այս աղջկէլ. սակայն իրա գործնական նպատակների համար՝ իրան անտարբեր չէ ցոյց տալիս—այնպէս որ սրանով շարժում է նոյն իսկ իր դժբախտ կնոջ նախանձը Շանեարն ամուսնանալու համար մտածում էր ինքնուրոյն դիրք ձեռք բերել Սակայն ոչինչ այնքան չէր սարսափեցնում կասկածու և ինքնավստահութիւնից զուրկ Սօլնէսին՝ ինչքան նոր ուժերի ինքնուրոյնութիւնը. նա վախենում էր նրանց սրցումից և նոյն իսկ գերազանցութիւնից.—«Այսպէս, այսպէս։ Հալվարդ Սօլնէսը պէտք է յետ մզուի, տեղի պէտք է տայ երիտասարդներին, մանաւանդ ամենաերիտասարդին Տեղի պէտք է տայ, տեղի...»—ահա կատաղի ճարտարապետի սրաի փղձկոցը։

Նա ի հարկ է ամեն կերպ պէտք է աշխատէր պահել Շանեարին։ Նա առաջարկում է ամուսնանալ և դարձեալ իր մօտ մնալ. Սյսպէս էր և Կայեայի ցանկութիւնը, որի սէրը դէպի ճարտարապետը այնպիսի չափեր էր ընդունել որ նա բացարձակապէս արդէն խոստովանում է թէ Սօլնէսից «չէ կարող հեռանալ, պէտք է մնայ նրա մօտ»։ Նա այնքան առաջ է գնում, որ նոյն իսկ պատրաստ է բաժնուել Շանեարից։ Սակայն միամիտ օրիորդը անընդունակ էր ճարտարապետի յետին մաքերը հասկանալ, զգալ, որ ինքը անձամբ ոչ մի նշանակութիւն չունի իր անխիղճ մեծաւորի համար։ Սա իսկոյն պարզում է երբ Շանեարը պնդում է իր հրաժարականի վրայ և գուրս զալուց առաջ ճարտարապետից մի վկայական է պահանջում։ Վերջինս ամեն կերպ ձգձում է և չէ ուզում նրան վկայական տալ։ Այնպէս որ Հիլդէ Վանդէլի նման մի արկածախնդիր և բարոյականութեան կօգէքան արհամարհող կինն անգամ նրա վարմումքը գտնում է «չափազանց տգեղ, խիստ, չար և անխիղճ»։ Միայն Հիլդէի ստիպմամբն է նա համաձայնուում վերջապէս նրան վկայական տալ։ Սակայն ճարտարապետի իստարտութիւնը այս դէպետնն էլ տուեց իր զո՞ր։ Նա Շանեարի ծերունի հօր՝ Քնուտին կաթուածահար դարձրեց։

Բայց ով էր Հիլդէն, որի անունը մենք իսկոյն յիշեցինք։ Ինթերցողն անշուշտ չէ մոռացել «Ծովի տիկնոջ» հերոսուհինե-

բեց մէկին՝ բժիշկ Վանգէլի կրտսեր աղջկան՝ փոքրիկ Հիւդէին, որ «օտարոտի» և «զրաւիչ» բաների սիրահար էր։ Ահա «Ճարտարապետ Սօլնէսի» Հիւդէն այս նոյն անձնաւորութիւնն է և հէնց ուղղակի կոչւում է Հիւդէ Վանգէլ։ իսկ դրամայում մինչև իսկ մի անգամ ակնարկւում է, որ նրա հայրը վիճակային բժիշկ է եղել—և սա, ինչպէս յայտնի է, Վանգէլի պարապմունքն էր։ Հիւդէն այս ժամանակ դեռ եռման շրջանի մէջ էր։ Հոգևորան յայտնի ասղմերով զինուած, բայց գեռ անկազմ և անպարաստ Այժմ նա արդէն 23 ատրեկան է՝ մեծացած, չափահաս դարձած։ Նրա բնաւորութեան հիմնական գծերը համարեած թէ պահպանուած են—մանաւանդ դէպի «զրաւիչն» ունեցած ջերմ հակումը փայլում է իր ամբողջ մակերեսոյթականութեամբ։

Տասը տարի առաջ Հիւդէն իր հայրենիքում հանդիպել էր ճարտարապետ Սօլնէսին, որ այստեղ շինել էր մի եկեղեցի՝ շատ բարձր գմբէթով։ Հիւդէն ամենայն մանրամասնութեամբ յիշում է թէ ինչպէս գմբէթը կանգնեցնելուց յետոյ մեծ տօն էր քաղաքում—«եկեղեցու գաւթում երաժշտութիւն կար։ և հարիւրաւոր մարդիկ էին հաւաքուած։ Մենք դպրոցական աշակերտուհներս սպիտակաղգեսատ էինք և դրօշակներ էինք կրում ձեռներիս։ Յետոյ նա պատմում է թէ ինչպէս ճարտարապետը մի մեծ պսակ վերցրած՝ բարձրանում է եկեղեցու պատերից վեր և կախ է անում գմբէթի ծալրից—«Այդ ժամանակ այնպէս հրաշմի էր և գրաւիչ ներքև կանգնած դէպի ձեզ նայել։ Բայց եթէ յանկարծ նա վայր գլորուէր—ինքը՝ ճարտարապետը։»

—«Դա հեշտութեամբ կարող էր պատահել։ Նկատում է Սօլնէսը, «որովհետեւ սպիտակաղգեսատ սատանայի աղջիկներից մէկը այնպիսի վայրենի ձայնով աղաղակեց...։»

—«Կեցցէ ճարտարապետ Սօլնէս—այս։»

—«Եւ դրօշակն այնպէս էր տատանում, որ այդ տեսարանից գլուխս ուղղակի պայտ էր գալիս։»

—«Այդ սատանայի աղջիկը հէնց ես էի։»

Զարանձնի Հիւդէն այնուհետև ուզում է ճարտարապետին հաւատացնել թէ նոյն օրը՝ երեկոյեան մի մեծ ընթրիքի ժամանակ՝ վերջինս ցանկութիւն է յայտնել՝ տեսնել այդ փոքրիկ աղջկան, որին նա համբուրել է և խոստացել է 10 տարուց յետոյ գալ և տանել Սպանիա կամ մի ուրիշ տեղ ու նրան տալ մի ամբողջ թագաւորութիւն—«Նարնջային թագաւորութիւն։ Եւ նա այժմ եկել այս թագաւորութիւնն էր պահանջում։ Նա կամենում էր «զքսուհի» դառնալ։»

Ճարտարապետը, որ սկզբում շուարել և Հիւդէի այս վեր-

Յին պատմութիւնը միանգամայն անհասկանալի էր գտնում՝ յանկարծ խորհրդաւոր կերպով նկատում է—«Այդ բոլորը ես անշուշտ մտածած, կամեցած, ցանկացած—էն, սատանան տանի—գործած պէտք է լինեմ»:

Բայց Հիլդէն շատ յարմար ժամանակին է զալիս, ճարտարապետը մեծ յուսահատութեան և զղջման զգացմունքի մէջ էր քին աշխարհը՝ նա զգում է յիրաւի, որ ինքը կոչուած է միայն ուրիշների համար բնակարաններ շնուրու, իսկ իր համար—երբէք։ Նա տեսնում է թէ ինչպիսի թանգ գնով է ձեռք բերել իր յաջողութեան դափնիները—«ոչ թէ փողով, այլ մարդկային բաղդաւորութեամբ, և այդ ոչ միայն իմ սեփական բաղդաւորութեամբ, այլ և ուրիշների... Ո՞վ հրաւիրեց օգնականներին և ծառաներին—ես ինքու։ Եւ ահա եկան նրանք և ենթարկուեցին իմ կամքին։ Այս ե, որ մարդկի անուանում են «բաղդ ունենալու Բայց գիտէք ինչպէս է այդ բաղդի զգացմունքը։ Դա նման է կրծքի վրայ բացուած կաշեզուրկ մի տեղի։ և օգնականներն ու ծառաները ուրիշ մարդկանց կաշուից կտորներ են խուռ իմ վերքիս սպեզանի անելու։ Սակայն անուամենայնիւ վէրքը չէ բուժուած և երբէք չի բուժուի։ Ա՛խ, եթէ գիտենայիք՝ սա երբեմն ինչպէս կծում, այրում է ինձ»։

Ճարտարապետը խղճի զօրեղ խայթ է զգում մանաւանդ իր կնոջ՝ Ալինէի նկատմամբ—«նա էլ կեանքում իր կոչումն ունէր։ ճիշտ այնպէս ինչպէս ես իմն ունէի։ Բայց նրա կոչումը պէտք է ճնշուէր, քաքայուէր, ոչնչանար, որպէս զի իմս ինձ յառաջ մղէր՝ զէպի մեծ յաղթութիւննը։ Նա էլ ունէր ստեղծագործելու, կառուցանելու յատկութիւններ—փոքրիկ երեխայական հոգիներ ստեղծել, Հիլդէ—հոգիներ, որոնք պէտք է մեծանային հաւասարակշռութեամբ և ազնիւ ու գեղեցիկ ձեերով... Այս էր Ալինէի կոչումը, որ երբէք չը գործադրուեց և յաւիտեան չի գործադրուի...»։

Բայց Հիլդէն ամեն կերպ աշխատում է արմատախիլ անել նրա մէջ փափուկ զգացմունքի վերջին հետքերը, նրան ըստ կարելոյն խստախիրտ և անողոք զարձնել։ Նրա միակ ցանկութիւնն է, որ Սօնէսի «խիթճը նրբազգաց չը լինի»։ Իսկ «պարտականութիւնների մասին՝ նա լսել անդամ չէ կամենում—«Թա մի սառն, անախորժ և խայթող տպաւորութիւն է թողնում—պարտականութիւն, պարտականութիւն, պարտականութիւն—չէք զգում, որ այս բառը ուզզակի մարդուս խայթում է»։

Իսկ երբ Սօնէսը իր երկիւղն է յայտնում երիտասարդու-

թեան վերաբերմամբ, որի երևան գալու մէջ նա տեսնում է մի տեսակ «փոխարինութիւն»—Հիլդէն հանգստացնում է նրան՝ յորդորելով ոչ մի վախ շունենալ երթասարդութիւնից:

Այս տարօրինակ կինը, որ կոյր կերպով հաւատում էր ճարտարապետի կարողութեանը՝ նորից ինքնավստահութիւն և համարձակութեան ողի է ներշնչում նրան: Նա պնդում է խոստացուած «թագաւորութեան» վրայ, որի ամրոցները պէտք է լինէին միանգամայն անմատչելի, օգային, Այս, նա կատարեալ լրջութեամբ պահանջում է Սօլնէսից իր ճարտարապետական գործունէութեան երրորդ և փառաւոր շրջանում «օգային ամրոցներ» կառուցանել Որքան ֆանտասիկական լինի այս պահանջը՝ այսուամենացնիւ դրա մէջ ամփոփուած է մի խորիմաստ միմրօլիզմ—Հիլդէն այնքան է ողևորում Սօլնէսին, որ նա համարձակութիւն է ստանում մի անգամ էլ ձեռնամուխ լինել «Անկարելիին», նա կատարելապէս յուօահատուել էր և եկել էր այն եղրակացութեան, որ «մարդկանց համար կառուցուած բնակարանները միանգամայն անարժէք են» և մինչև իսկ մի յետագարձ հայեացըով գտնել էր, որ ինքը ըստ էութեան «ոչինչ չէ կառուցել»: Նրան մեծ վիշտ էր պատճառում մասաւանդ այն հանգամանքը, որ ինչքան նա բարձր էր ալանում, գէպի ամպերն, այնքան չը գնահատուած էր մնում հասարակ մահկանացուներից, որոնք աւելի համեստ ոճով կառուցուած բնակարանների պէտք ունէին: Սակայն Հիլդէն ոչ միայն գնահատում, այլ և ջերմ կերպով խրախուսում է նրան, եւ ահա թէ ինչ է լինում այս խրախուսանքի հետեանքը:

Ճարտարապետ Սօլնէսը «փայտէ արկղի» բեկորների վրայ կառուցել էր իր սեփական բնակարանը՝ մի բարձր սրածայր աշտարակով: Հիլդէի բրուն՝ ցանկութիւնն էր «իր ճարտարապետին այդ նորակառոյց բարձրութեան գագաթին տեսնել»: Սակայն ոչ ոք չէր կարող Սօլնէսից այս բանն սպասել, որովհետեւ ամենքին յայտնի էր, որ նա «զլիսի պառյա» ունի—այս հիւանդութիւնը միմրօլիքական է՝ ցոյց է տալիս ճարտարապետի կասկածու և անինքնավստահ լինելը: Մեծ երկիւղի մէջ էր մանաւանդ Ալինէն, որ շատ լաւ էր ճանաչում իր ամուսնուն և սրտագին թափանձանքով յորդորում էր իրանց տնային բժշկին՝ արգելել այդ բանը:

Բայց Հիլդէի կամքը յաղթող է հանդիսանում—ճարտարապետը խուռն բազմութեան առաջ՝ պսակը ձեռքին վերեւ է բարձրանում: Ահա նա արդէն աշտարակի գագաթին է և պսակը կախ է անում Սմենքը ապշած են մնացել, որովհետեւ սա մի անսակնիալ էր: Եւ մինչդեռ բժիշկը իր շրջապատող հանդի-

սականներին զգուշացնում է ծպտուն անգամ չը հանել—Հիւ-  
դէն խլում է նրա ձեռքից մի սպիտակ շալ և տատանելով  
հիասքանչ ոգեւորութեամբ աղաղակում է—«կեցցէ ճարտարա-  
պետ Սօլնէս»:

Հիւդէի այս աղաղակը էլեկտրականացնում է բոլոր ներ-  
կայ եղողներին: Շարժւում են թաշկինակներ և հնչում է  
«կեցցէ»-ների որոտընդուստ ձայնը, որ սակայն յանկարծ ընդ-  
հատւում է և անդի տալիս սարսափի աղաղակների: Ճարտա-  
րապետը կորցնում է իր հաւասարակշռութիւնը և ահագին  
բարձրութիւնից վայր գլորուելով իսկոյն անշնչանում է:

Ահա յամառ Հիւդէի հիւանդուտ կամայականութեան վախ-  
ճանը: Բայց իր այս ողբերդական վախճանի համար նոյնքան  
պատասխանատու է և ինքը՝ ճարտարապետը: Սա փառամոլու-  
թեան և նեղ եսականութեան ապօթէօդն էր: Կան սրբութիւն-  
ներ, որնոց ոտնակոխ լինելը ինչպիսի խստասրտութեամբ էլ  
տեղ ունենայ՝ այնուամենայնիւ վաղ թէ ուշ էկը փոխարինուիր,  
անպատիժ չի մնայ: Սօլնէսի խստասրտութիւնն անշուշտ ուրիշ  
կերպարանք կը ստանար, եթէ նա մարդկային զոհերը ոչ թէ  
իր փառասիրական հակումներին, այլ յատկապէս իր արուես-  
տին ծառայեցնէր—գեղարուեստի և մարդկային կեանքի ու-  
րազդաւորութեան մէջ եղած հետաքրիր խնդրին մննք կը վե-  
րագառնանք հետեւեալ անգամ՝ իբսէնի վերջին դրաման  
քննելիս:

Սակայն անկախ եսական դիտումներից՝ ճարտարապետ  
Սօլնէսը այսպէս թէ այնպէս ուշագրաւ է նաև իբրև արուես-  
տագէտ: Իբրև ստեղծագործող խոշոր մի տաղանդ մննք տես-  
նում ենք նրա մէջ մշտական դժողովութեան, նիւթի փոփոխու-  
թեան պահանջ՝ եկեղեցուց նա անցնում է ամարդկային բնակա-  
րանների և վերջապէս «օդային ամրոցների»: Իր ճաշակով,  
աղատ և վերամբարձ ոճով շինուած «բնակարանները» երբ  
առօրեայ կեանքում չեն գնահատուում՝ նա բնականաբար  
կարիք պէտք է զգար մնեկուսանալու: Եւ այս հակումին  
մեծ զարկ է տալիս Հիւդէն, որ անշուշտ աւելի թեթեւ էր  
նայում խնդրի վրայ, լոկ «գրաւչութեան» տեսակէտից: Սա-  
կայն եթերային արուեստի սիրահարներից մէկը գեռ «օդա-  
յին ամրոցներ» չը կառուցած ի հարկէ ողբալի կերպով պէտք է  
վայր գլորուէր: Խսկ միւսը՝ կիսախնելագար ապշութեամբ պէտք  
է հիասթափութեան հարուածով շանթահարուէր: Սրանով իբ-  
սէն թէ կեանքի և թէ գեղարուեստական իդէալիզմի մէջ՝ խո-  
րիմաստ հետեւղականութեամբ՝ նորից իր ցուցամատն ուղղում

է դէպի փրկարար իրականութիւնը և ոչ թէ դէպի «երեակաւութեան կանաչ կղզիները»:

Հիլդէն ինչքան ինքնատիպ և հետաքրքիր, այնուամենայնիւ իր ամբողջ էութեամբ մի թեթևովիկ երեսյթ է ներկայացնում: «Գրաւիշի» ուշ յգեթ-ով անբուժելի կերպով վարակուած՝ նա պէտք է շատ ծանր կնով դապուէր: Զուրկ հոգեկան հաւասարակառութիւնից, մարի և զգացմունքի ներդաշնակ կըրթութիւնից՝ նա շարունակ անձանօթի, «անկարելիի» կարօտն էր զգում: Ընտանեկան յարկը նրան թւում էր մի «վանդակ»: Այս պատճառով ազատասէր թռչունը դուրսն է սաւառնում: Ճարտարապետ Սօլնէսը նրան մի անզամ անուանում է «անտառաթռչուն», բայց Հիլդէն դժգոհ էր այս մականունից: Նա ինքն իրան անուանում է «գիշատիչ թռչուն» և ոչ թէ «անտառաթռչուն», որովհետև վերջինս թաղնում է փայտակոյտերի մէջ, իսկ ինքը ազտու, համարձակ որսի յետին է սլանում:

Նա միանգամայն մակերեսովթական է, գուցէ ինքնատիպ բայց ոչ ինքնուրոյն: Նա իր աշխարհանայեացքի ամբողջ պաշարը գրեթեցն է քաղել: Բայց գեր մարմին և արիւն չէ դարձրել: Ապացոյց՝ այն թեթև ու անհետեղական վերաբերմունքը, որ նա ցոյց է տալիս «փաղճի» և «պարտականութեան» զգացմունքի նկատմամբ: Նա մի բոպէ խօսի հարուածներով բարոյականութիւնը ոտնակոխ է անում—իբրև «բարիից և չարից դէնը» սկզբունքի երկրպագու: Նզովքի մի կատաղի տարափ է թափում յանուն «խայթող պարտականութեան»: Իսկ միւս բռպէին ամենաանխնայ կերպով դատապարտում է Սօլնէսի խըստասրտութիւնը:

Խնչպէս իւր նախկին հերոսներից շատերի, այնպէս էլ Սօլնէսի մէջ հեղինակը դրել է իր ինաւորութիւնից մի քանի գծեր: Բայց մեծ թիւրիմացութիւն կը լինէր Սօլնէսը միանգամայն իբսէնի մարմնացումը համարել: Մի քանի քննադատներ «ճարտարապետ Սօլնէսի» մէջ տեսնում են իբսէնի «գեղարուեատական ինքնախսուսովանութիւնը»: Բայց հանճարեղ, զրամատուրգի ինքնախսուսովանութիւնը տեղի ունեցաւ եօթ տարի յետոյ՝ 1899-ին՝ երբ լոյս տեսաւ նրա վերջին զրաման—«Երբ մենք մեռածներս յարութիւն առնենք»:

Մեզ շատ սխալ է թւում մանաւանդ այն միաքը թէ՝ «երիտասարդութեան սարսափը» պատել է նաև առանձնութեան աիրահար իբսէնին: Եթէ այս կարծիքին իբրև փաստ ծառայում է այն հանգամանքը, որ իբսէն ինսունական թուականների սկզբներին հրապարակով հրաժարուեց Միւնխնում կազմուելիք «ազատ բեմի» պատուաւոր անդամ ընտրուելուց—այն ժամանակ

և պէտք է անուշադիր թռղնել, որ հեռատես և նրբազգաց դրամատուրգը իր այս քայլի նկատմամբ ունէր անշուշտ իր լուրջ վերապահումները, որոնք միայն նեղ-կուսակցական մանրակրկտութիւնից կարող էին վրիպել թէ որքան իրաւացի էր եղել իրսէն—դա երեաց այն տարօրինակ մետամօրֆօզից, որին հաթարկուել է վերջին տաճամենակում «մօդեռ» գրականութիւնը, իսկ մի բացարձակապէս ինքնուրոյն. վազուց կազմակերպուած—այն, մինչև իսկ ծերացած—ե ապառաժ բնաւորութեան տէր արուեստագէտի կարելի էր միթէ քամու թեթև հոսանքների ենթարկել.

«Երիտասարդութիւնից վախենալու» առակը կրկնակի ծիծաղելի է գառնում, երբ մարդ մտածում է—իրսէն ինչ տեղիք ունէր երկիւղ կրելու՝ քանի որ խորապէս զգում է, որ ներկայում ինքը՝ իրրև դրամատուրգ՝ ուղղակի անզուգական է, Զբ որ նոր դրամատիկական դպրոցի բոլոր յայտնի ներկայացուցիչները նրա հետեւողներն են. համարեա ամենքը՝ Հառուպտմանից և Զուդէրմանից սկսած՝ նրա աշակերտներն են—առանց սակայն մեծ ուսուցչին ոչ միայն գերազանցելու, այլ գէթ հաւասարուելու: Եւ հասուն ու տաղանդաւոր աշակերտները իրսէնի հսկայական մեծութեան առաջ՝ գուցէ այս յաւակնութիւնն անգամ չունենան:

## XVI

«Ծովի տիկինը» իւր օպտիմիստական վերջարանով տեղի տուեց երկու այնպիսի դրամաների, որոնց մէջ, ինչպէս տեսանք, պեսսիմիստական տարրը գերակշռում էր: 1894-ին իրսէն գրում է մի նոր դրամա—«Փոքրիկ Լյոլֆ» («Lille Elf»), որ իր հիմնական իգէայով «Վայրի բաղի» հակապատկերն է ներկայացնում: Այստեղ չը կայ այն մոռայլ տրամադրութիւնը, այն ձնշող մթնոլորդը, որ սկզբից մինչև վերջ ծանրացած է «Վայրի բաղի» ամբողջ հիւսուածքի վրայ: Յիբաւի երկինքն այստեղ էլ անամպ չէ, բայց մթագին խաւարի միջից վայլում է յօյսի ձառագայթը, իդէալի յաղթանակի գործը, որ հետզետէ բորբոքուելով՝ իր պայծառ շղներով զովութիւն, վերակենդանութիւն է ներշնչում: Եւ որքան գեղեցիկ, որքան միխթարական է՝ յոտեան դրամատուրգին իր 64-ամնայ հասակում տեսնել հաւաքի ջերմութեամբ համակուած: Իր կեանքի արևմուտքում նա այլ ևս միայն քանդող, աւերող, հերքող, բացասող չէ, այլ շինող, վերակենդանացնող, գործնական իդէալիզմի յաղթանակն աւետող: Այնպէս որ նրա քոյրը կատարելապէս

իրաւունք ուներ կմիլ Ռայխին նկատելու—«Իմ եղբայրը ուղղակի մի մարգարէ է, որ կոչուած է մարդկանց ազգարարելու՝ հեռու. մնալ ծանր փորձութիւններից և ժամանակի վտանգաւոր հոսանքներից»:

Եւ ամեն մի խսկական, մեծ բանաստեղծը որոշ չափով անշուշտ մի մարգարէ է:

Ալֆրէդ Ալմէրս՝ նախկին ուսուցիչը՝ ամուսնանալով գեղեցիկ և հարուստ Ռիտայի հետ վերջինիս ռուկով և կանաչ անտառներով գալնում է մի մեծ կալուածատէր։ Նա իր ամուսնութիւնը այսպիսի մի կնոջ հետ պատճառաբանում է նրանով թէ՝ կամենում էր ապահովել իր կոյր Աստային։ Բայց Ռիտայի հետ ունեցած կապի առաւելութիւնն այն է լինում, որ հենց ինքը Ալֆրէդն է ապահովուում։ Նա աշխատասէր և զիտական զբաղմունք սիրող մի մարդ էր—այնպէս որ այս տեսակ ամուսնութիւնից յետոյ հանգիստ կարող էր նույիրուել իր գործին։ Սակայն նրա կեանքը միակողմանի ուղղութեամբ է առաջ գնում. տարիներ շարունակ գրեթի և թղթերի մէջ թաղուած՝ նա կատարելապէս մոռացութեան է տալիս իր ընտանեկան միւս պարտականութիւնները—իր միակ որդի փաքրիկ կյօլֆի համար նա «միայն ուսուցիչ» էր և ոչ «խսկական հայր»։ Առանց այն էլ նա իր կնոջ հետ միասին մեծ պատասխանատւութիւն էր կրում դէպի իր որդին։ Վերջինս ծնուելուց մի քանի շաբաթ յետոյ՝ ծնողների անզգուշութեան պատճառով՝ վայր է ընկնում և ոտք վտանգաւոր կերպով վնասում. կաղ է դառնում։ Փոխանակ այս Փիզիկական արատից խրատուելու և դժբախտ փոքրիկի առողջութեան մասին առանձին հոգ տանելու՝ հայրը մանկական տարիներից նրան միայն խիստ աշխատափրութեան է վարժեցնում. ինչ վերաբերում Ռիտային՝ նա ոչ միայն մայրական, այլ և մարդկալին կարեկցութեան նշոյլ անդամ չէր տածում դէպի իր որդին։ Նա պատկանում էր այն անխիղճ, հրէշաւոր կանանց շրջանին, որոնք ամուսնութեան մէջ որոնում են միայն իրանց անձնական հաճուքը, զգայական անսանձ կիրքը։ Իսկ այդ կրքի պտղի մասին չեն էլ մտածում. ընդհակառակին՝ ամենավայրագ ցանկութեամբ կը կամենային ոչչացնել այդ պտղուղը՝ եթէ ոչ սաղմում. գէթ հասունացած ժամանակ...

Այս տեսակ հանգամանքներում փոքրիկ կյօլֆի միակ ինսամատարն էր իր ազնիւ հօրաքոյրը՝ օրիորդ Աստան։

Ալֆրէդը ամուսնանալուց յետոյ տարիներ շարունակ իր կնոջ հետն էր եղել Միայն ամուսնութեան տասնամեակում՝ ամառը՝ նա մի քանի շաբաթով հեռանում է գղէպի լեռները։ Այստեղ՝ գեղածիծաղ բնութեան գրկում, խորհրդաւոր առանձ-

նութեան մէջ նրա միտքը թարմանում, հողին պարզուում է: Երբ նա ականատես է լինուում «կեռնքի կատարներում մարզղ վերջալոյսի շողերին»՝ իրան ամօտ է զգում և աստղին և արեւին, և ծովին և ցամաքին: Բայց այս պանթեիսաական տրամադրութիւնից դուրս՝ նրա մէջ տեղի է ունենում մի՝ թէեւ իր խօսքով «փոքրիկ» բայց մեծ յեղաշրջում: Իր 10 տարուան կեանքը նրան թւում է «մի հէքիաթ կամ մի քունչ և աւարին» աւարին կեանքարունակ նստել է գրասեղանի առաջ և գրել մի մեծ աշխատութիւն «մարդկային պատասխանատուութեան» մասին: Այժմ էլ նոյն իսկ նա վերցը էր իր թղթերի մի կապոց՝ ճանապարհին նոր բաներ գրելու, ու կայան այդ կապոցը անշարժ է մնում: Նա սկսում է ատել մտաւոր զբաղմունքը: Նոյն իսկ մեծ երկը, որի վրայ նա քրանաջան աշխատանք էր թափել, այժմ նրան մի ոչնչութիւն է թւում: Խիստ ինքնաւքնադատութեամբ նա այժմ այն եղբակացութեանն է գալիս, որ իրաւունք չունի խօսել անդամ «մարդկային պատասխանատուութեան» մասին, որովհետև ինքը իբրև հայր՝ միանդամայն պարտազանց է գտնուել նրա խոհերի և մտորումների կենտրոնակէտը այժմ միայն ելովն է: Նա զգում է թէ որքան անխնամ է գտնուել դէպի նա և հաստատակամ կերպով վճռում է այդ փոքրիկի «ազնիւ հակումներից» ընտիր բողբոջներ և լաւագոյն պտուղներ առաջնել էյօլիք այլ ևս առաջուայ նման միայն զրելով և կարգալով լը պէտք է զբաղուէր, այլ պէտք է «թարմ օդում լինէր, կատարեալ ազատութիւն վայելէր»:

Իր որդու գաստիարակութեան ինդիրն այնքան յափշտակել, մտազբաղ էր դարձել Ալֆրէդին, որ նա մէկ և կէս ամուսայ ճանապարհորդութիւնից վերադառնալիս՝ մոռանում է խմել կնոջ պատրաստած «շամպայնը»: Նա ամտածում, մտածում և մտածում էր: Սակայն այս բոլորի հետ միասին նրա մէջ կազմակերպուել էր դրական մի անզրդուելի վճիռ—փոխանակ զրքեր գրելու՝ կենդանի օրինակով ապացուցել թէ «որքան մեծ է մարդկային պարտականութիւնը»:

Երբ Ալֆրէդը իր այս ծրագրի մասին տեղեկացնում է իր կնոջ՝ նա զարմանում և շատ բնորոշ «տգիտութեամբ» հարցուում է—«միթէ այդ բարձր նպատակներդ այստեղ՝ տանը՝ պէտք է իրականացնես»—«Քեզ հետ միասին»—պատասխանում է միամիտ Ալֆրէդը:

Այս պատասխանից յետոյ արդէն կատարելապէս պարզում է Ռիտայի ոգին իր հրէշաւոր մերկութեամբ: Նա իբրև «կին» կամենում էր, որ Ալֆրէդը «միմիայն իրան պատկանի»: Նա անկարող էր «հրաժարուել նրանից»: Այս պատճառով լուռ-

թեան մէջ նա ինչպէս ատում էր Ալֆրէդին՝ երբ նա մինչև կէս գիշերը նստած՝ աշխատում էր, իսկ ինքը ժամերով միայնակ պիտի մնար: Եւ այժմ աւելի է ատում նրան, որովհետեւ մտաւոր աշխատանքը թողած «ուրիշ նպատակի էր նույիրւում» աւելի վատրաց: Այս նպատակը—եյօլֆի կրթութեան նույիրւուելը—նա համարում էր «արբազան կապերը կտրել»: Նա յայտնապէս նկատում է Ալֆրէդին՝ «երեխան կիսով է միայն ինձ պատկանում, իսկ գու ամբողջովին»: Իսկ այս «կէս» բեռից էլ ազատուելու համար նա ամենաանպատկառ անտարբերութեամբ որքան կը կամենար, որ եյօլֆը «երբէ ծնուած չը լիներ», երա մտքովն անգամ չէր անցնում լինել «միայն մայր եյօլֆի», այլ ամենից առաջ «կին Ալֆրէդի»: Այս է պատճառը, որ երբ վերջինս յայտնում է թէ գնուել է դառնալ «եյօլֆի համար իսկական հայր»—նախանձու կինը իսկոյն հարցնում է—«իսկ ինձ համար»: «Հանգիստ և խաղաղ սիրով մի ամուսին»—պատասխանում է Ալֆրէդը: Սակայն զգայականութեան ստրուկը չէ բաւականանում «այս ողորմելի փշրանքներով». Նա լիսակատար և կրքու սէր է պահանջում—հակառակ դէպում սպառնում է մինչև իսկ գնալ և «առաջին հանդիպողի գիրկն ընկնել»:

Մինչդեռ Ռիտան իր հրաբորքով խանդի և վայրագ ցանկութիւնների լեզին էր արտաթափում—յանկարծ դուրսը լըսում է մանուկների խառնիճաղանձ մի աղաղակ, որ հետզետէ պարզւում է և յայտնւում, որ նրանցից մէկը ջուրն է ընկել և խեղդուել: Ալֆրէդը և իր քոյրը սոսկալի երկիւղի մէջ են և եյօլֆի մասին մտածում: Իսկ անիիղճ մայրը անա թէ ինչ խորհրդաւոր ցանկութիւն է յայտնում—«Աստուած տայ նա չը լինէր»: Մի քանի վայրկեանից յետոյ յայտնւում է, որ խեղդուզը եյօլֆն է եղել: Սա մի սոսկալի հարուած էր գիրազդ Ալֆրէդի համար: Նա իր ականջներին չէր ուզում հաւատալ—«Անկարելի է, այսպիսի թանկագին մի կեանք»—մրմնջում է վշտաբեկ հայրը:

Բայց ինչպէս պատահեց եյօլֆի մահը: Ալֆրէդի վերադից մի քիչ յետոյ ներս է զալիս մի պառաւ կին, որ իրան անուանում է «մինորս»: Նա հաւաքում էր «փոքրիկ կենդանիներին», որոնց բոլորը «ատում և խիստ կերպով հալածում են», Նա զալիս էր «հեռու կղզիներից», որոնց բնակիչներին—«փոքրիկ կենդանիների» շատութիւնից—մնացել էր միայն «թթու խնձոր» ուտելի: Նա ժողովում և տանում էր այս «փոքրիկներին» ջրի յատակը, ուր նրանք «այնպէս քաղցր և երկար քնով են քնում»: Այս պատճառով պատահաբար եկել էր Ալմէրսի տունը և հարցնում—«Այստեղ, պարոնների քօտ ոչինչ չէ կրծում»:

Յետոյ նա շատ ցաւում է՝ երբ տանելու բան չէ գտնում, որովհետեւ այլ ևս շշատ ուշ էր վերադառնալուն՝ Փաքրիկ Եյօլֆը մի կողմից վախվսելով, իսկ միւս կողմից առանձին հետաքրքրութեամբ էր նայում «մինորսին», մանաւանդ նրա փոքրիկ շանը։ Իսկ պառաւը երեւմ խորհրդաւոր հայեացք էր ձգում «վիրաւորուած փոքրիկ զինորականի» վրայ՝ Եյօլֆը այդ օր մի սիրուն համազգեսա էր հագել։

Ահա հետեւելով այս պառաւին և նրա շանը՝ Եյօլֆը ծովափին սայթաքում է և ջուրն է ընկնում։ Նրա ընկերները, որոնք բոլորն էլ լողանալ գիտէին, ականատես են լինում այս գժբաղդութեան՝ առանց սակայն ծովը նետուելու և խեղճ Եյօլֆին ազատելու—մի կազի համար՝ ոչ ոք չէր ուզում այդպիսի նեղութիւն յանձն առնել եւ նրանք տեսնում են՝ թէ ինչպէս վճիտ ջրի յատակից ռաջերը բաց, հանգիստ և անթարթ նայում է—մինչև որ մի զօրեղ հոսանք գալիս և նրան կուլ է տալիս։

Այս «մինորսը» անշուշտ սիմբոլիքական է։ Նա «կրծող կենդանիներ» էր փնտում։ չէ որ իր դաժան մօրը համար փոքրիկ Եյօլֆը հէնց մի «կրծող կենդանի» էր։ Նա էլ է զնում ջրի յատակը հանգիստ քուն վայելելու։

Սակայն այս անմեղ զոհը մի մեծ յեղաշրջում է առաջ բերում Ալմէրսի ընտանիքում։ «Փոփոխութեան օրէնքին» Ալֆրէդը գործնականապէս արդէն ծանօթ էր։ Նա ընդունակ էր մինչեւ իսկ «կրուսաթի մէջ օգուտ տեսնելց»։ Բայց այժմ պատահում է ամենամեծ անակնկալը՝ Ռիան հոգեպէս կերպարանափոխում է։ Նրա զգայականութիւնը նսնմանում, կրքի ալեկոծութիւնը խաղաղում է։ Փոքրիկ Եյօլֆի ուրուականը այլ ևս երբէք չէր կարող նրան հանգիստ տալ։ Նա կարծես միշտ տեսնում էր նրան «մեծ, լայն բացուած աչքերով», որոնք դէպի ինքն են յառած։ Նա որ մի փոքր առաջ կատաղի խանդով էր վերաբերում դէպի Աստան՝ այժմ ինդրում, պաղատում է մնալ իրանց մօտ, որովհետեւ նա «անկարող էր իր վիշտը, իր կորուսար Ալֆրէդի հետ միայնակ կրելց»։ Նա ուզում էր, որ Աստան մնար և դառնար իրանց «Եյօլֆը» (Աստայի փաղաքշական անունը մանկութեան ժամանակ)։ Սակայն Աստան՝ ինչքան էլ դանկանար՝ անկարող էր մնալ։ Նա իր մօր նամակները քրքրելիս՝ մի նշանաւոր գիւտ էր արել—որ ինքը Ալֆրէդի քոյրը չէ։ «Ես իրաւունք չունեմ քո հօր անունը կրելու»—ասում է նա իր «Եղբօրը»։ Իսկ դեռ եւս միամիտ Ալֆրէդը հարցնում է—«գու փախուստ ես տալիս ինձանից»։

«Թէ քեզանից և թէ ինձանից»—պատասխանում է Աստան

խորհրդաւոր կերպով նա սիրում էր Ալֆրէդին. և վերոյիշեալ անակնկալ յայտնագործութիւնից յնտոյ՝ կարող էր մնալ և նրան խլել Ռիտայի ձեռքից։ Բայց Աստան ոչ Ռէքէկայի կամ Հիլդէի տեմպերամէնտն էր կրում իր մէջ և ոչ նրանց հոգին։ Նա ինքնակամ հրաժարում է այս բաղդաւորութիւնից և կապւում ինժինէր Բուրգհայմի հետ։ Վերջինս մի ազնիւ, կենսուրախ և գործունեայ անձնաւորութիւն էր, որի համար «բաղզը զալիս էր, ինչպէս զարնանային հոսանքը»։ Սյո զոյզը ձեռք ձեռքի տուած գնում է բաղդաւորուելու։ Սակայն մնացող զոյզը՝ որ ըստ երեւոյթին շատ անբաղդ պէտք է լինէր՝ նոյնպէս բաղդաւորում է։

Եյօփի յիշատակը Ռիտայի զգացմունքներն այնքան է անզուացնում, որ նա իր համբերողութեամբ և հոգու վեհութեամբ զերազանցում է նոյն իսկ Ալֆրէդին։ Վերջինս որքան ցանկանում էր «ծովեկերքը մաքրել» այն տղաներից, որոնք անտարբեր հանգստութեամբ ակնատես եղան իր որդու խեղդուելուն։ Բերկրութեան ժպիտը փայլում է նրա ղէմքին՝ երբ լսում է այդ փոքրիկների փայտասունը—«հարբած հայրերը եկել են և ծնծում իրանց որդիներին։ Լսում ես՝ ինչպէս աղազակում են մանուկները, իսկ կանայքը օգնութիւն են աղերսում»։

—«Միթէ չես գնայ նրանց օգնելու»—հարցնում է Ռիտան։

—«Երանց, որոնք չը կամեցան օգնել Եյօփին—թող կորչեն նրանք, ինչպէս կորցնել տուին իմ փոքրիկին»։

Իսկ երբ Ռիտան «ամմեղ երեխաներից» է խօսում—«Ա՚ի, մեղ ինչ փոյթ», խստամիրտ կերպով նկատում է Ալֆրէդը, «նրանց ոչնչանալը կամ ապրելը միթէ մեղ համար մի և նոյն չէ»։

—«Քո բնաւորութեանդ չէ պատշաճում այդպէս խիստ լինել. Ալֆրէդ»։

—«Իմ իրաւունքն է խիստ լինելը և նոյն իսկ պարտականութիւնը, նկատում է անողոք ամուսինը»։

Ռիտան այնքան է առաջ գնում, որ վճռում է ապրել փողցի երեխաների հետ իրեն իր «սեփական երեխաների»։ Նրանք պէտք է փոխարինէն Եյօլֆին—«նրա սենեակում քնէին», նրա գրքերը կարդային, նրա խաղալիքներով խաղային»։ Նա մինչեւ իսկ յայտնապէս խոստովանում է—«Մենք փակել ենք այդ խեղճ երեխաների առաջ ոչ միայն մեր փողամանները, այլ և մեր սրտերը»։ Ահա թէ «սրտատեաց» կինը ինչ աստիճանի փափկութեան հասաւ, —«Դու դատարկութիւն առաջացրիր իմ մէջ, Ալֆրէդ, իսկ ես կը կամենայի որ և է բանով լցնել—մի

լրան, որ գէթ մի քիչ նման լինէր սիրոյ»։ Փողոցային թշուառ  
ձերեխաների խնամատարութիւնն է նրա այս սիրոյ արտա-  
վայտութիւնը,

Այնպէս որ Ալֆրէդը, «որ իր կնոջ ազդեցութեան տակ  
առոյնպէս կամաց կամաց մեղմանում է—իրաւունք ունէր նկա-  
տելու՝ «Եյօլֆը իզուր չը ծնուեց և մեղանից իզուր չը խլուեց»։  
Ըստ նրանք ձեռք ձեռքի տուած զնում են «երկնքին և աստղե-  
րին հանդիպելու»։ Նրանք զնում են գէպի «մեծ խաղաղութիւ-  
նը»—խաղաղութիւն երկրի վրայ, ուր սաւառնում են հարա-  
զամների հոգիները։

Խոկական ամուսնութեան բովանդակութիւնը շեշտելիս՝  
Խիմսէնը մինչև այժմ ընդհանրապէս սիրոյ, ազատութեան և  
ճշմարտութեան սկզբունքներն էր պաշտպանում։ Այս անգամ  
հանդ է առնում ամուսնութեան հիմնական անկինազարե-  
փից մէկի—զաւակի նշանակութեան—վրայ։ Մայրական պար-  
տականութիւնները նա, անշուշտ, շատ լայն է հասկանում։ Եւ  
ամենաընատիր ու իդէալական մայրերը նրանք են, որոնք անցել  
են ոչ թէ «թեթև ազատամտութեան» կամ անասնական զգա-  
յականութեան ճանապարհով, այլ իսկական ազատութեան և  
ճշմարտութեան դպրոցով։

Վ. ՆԱԼԻՇԱՆԴԵԱՆ

(Աերջը հետեւեալ անգամ)